

արարք մըն է, սակայն ճշմարիտ բարոյական արժէք մը չի ներկայացներ, եթէ մղուած է զանազան հակումներէ, ինչպէս յարգանքի ու պատիւի մարմաջէ: Իսկ շատեր բարերար են ու բարեգործութիւն կ'ընեն՝ *պարտաւորութենէն թիսած*, առանց մեծամտութեան ու շահախնդրութեան. անոնք, շատ հաւանաբար, ներքին բաւարարութիւն մը միայն կը գտնեն եւ կ'ուրախանան, երբ իրենց շուրջ ուրախութիւն սփռեն եւ ուրիշներ գոհացնեն: Եզրակացնելով հաստատենք, որ բարեգործութիւն մը, որ կատարուած է՝ *պարտաւորութեան համաձայն* եւ անձնական երջանկութեան համար, կարելի է գովել ու քաջալերել, սակայն երբեք բարձր գնահատել, ինչ որ յատուկ է *պարտաւորութենէն թիսած* բարերարութեան, որ կատարուած է առանց անձնական շարժառիթի (մեծամտութեան կամ շահախնդրութեան):

Այստեղ վերստին պիտի անդրադառնամ վերոյիշեալ՝ *բարոյական օրէնքին* եւ անոր հանդէպ պահանջուած *յարգանքին*, նկատի ունենալով անոնց կարեւորութիւնը:

Նախ շեշտելու է, որ այս օրէնքը քաղաքացիական կամ քրեական որեւէ օրէնք մը չէ, այլ *բարոյական օրէնք* մը, որ Կանտի համաձայն կը տիրէ զգացականէն անդին գտնուող, մտացածին աշխարհին մէջ: (Կանտ կը զանազանէ զուտ մտացածին աշխարհը՝ Noumenal World, երեւութական աշխարհէն՝ Phenomenal World): Իսկ այդ *բարոյական օրէնքին* հանդէպ պահանջուած յարգանքը կարելի է ընկալել որպէս զգացում կամ հակում, որ չի համապատասխաներ Կանտի *բարոյական օրէնքի* բանականութեան հետ ունեցած կապին: Կանտ, տողատակի ծանօթագրութեան մը մէջ, կը մերժէ յարգանքի (այս պարագային) որպէս զգացում կամ հակում ընկալումը եւ զայն կը բնորոշէ, որպէս մարդկային ա՛յն գիտակցութիւնը, որ կը նշէ կամքի անմիջական ենթարկումը՝ օրէնքին: Ուրեմն յարգանքը Կանտի համար, ա՛յս պարագային, լոկ զգացում մը չէ, այլ նոյնինքն վերը նշուած մարդկային գիտակցութիւնը:

Վերոյիշեալ, բարեգործութեան օրինակի պարագային եւս, եթէ բարերարը հրճուանքի զգացում մը կամ պատիւի մարմաջ մը ունենայ, Կանտի համար բարոյական իսկական արժէք չի ներկայացներ, որովհետեւ զգացական հակումի անձնական շարժառիթ մը կը մատնէ:

Որպէս եզրակացութիւն կարելի է ասել, որ այնքան ալ հեշտ չէ զանազանելը՝ վարմունքի մը *պարտաւորութեան համաձայն* կամ *պարտաւորութենէն թիսած* ըլլալը:

3. Ի՞նչ է՝ մաքսիմը

Մաքսիմը բարոյական վարմունքի անձնական (անհատական) կանոն կամ սկզբունք է, մեր կողմէ սահմանուած եւ մեզի համար:

Կանտի հակիրճ բնորոշումով, մաքսիմը վարմունքի առնչութեամբ՝ «*կամենալու ենթակայական (Subjective) սկզբունքն է*». այս պատճառով ալ մաքսիմը երբեք չի կրնար առարկայական (Objective) վաւերականութիւն ունենալ: